

3296

ЗКИМ

2-64

1921

10024

2010

40858 ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԱ- 9
ԴԱՐԱՆ

11
Խմբագրութեամբ Ն. Սուրենի

Երևանի քաղաքի Երկրորդի միացեալ

Գ. ԶԻՆՈՎՅԵՎ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԻՆՏԵՐՆԱ-
ՑԻՕՆԱԼԵ ԵՒ ՆՐԱ ԱՆԵՒԻԲՆԵՐԸ

Բիֆիւր, 1921

Библиотека Красной Моло-
дежи

ПОД РЕДАКЦИЕЙ Е. СУРЕНА

Пролетарии всех стран, соединитесь!

Г. ЗИНОВЬЕВ

ИНТЕРНАЦИОНАЛ МОЛО-
ДЕЖИ И ЕГО ЗАДАЧИ

(На армянск. яз.)

Тифлис, 1921

KHM
9-64



Ճառ արտասանած կարմիր Երիտա-
սարգութեան համազումարում Պետրո-
զրազում սեպտեմբերի 16-ին 1919 թ.



1957 88
80142-սեկ

**ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԵԱՆ ԻՆՏԵՐՆԱ-
ՑԻՈՆԱԼԸ ԵՒ ՆՐԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ**

Մինչև վերջին ժամանակս մենք
խիստ քիչ տեղեկութիւններ ունէինք
երիտասարգութեան միջազգային շար-
ժման մասին: Վերջին օրերս մեր բազ-
ղը բանեց, և մենք քիչ թէ շատ նիւ-
թեր ստացանք այն մասին, թէ
ինչպէս է զարգանում երիտասարգու-
թեան շարժումը զանազան երկիրնե-
րում: Ամենից առաջ ես կը ծանօթաց-
նեմ ձեզ այդ նիւթերի հետ:

Ինչ համար առանձնապէս հետաքրք-
րական էր իմանալ բանւոր երիտա-
սարգութեան համագումարի մասին,
որ կայացել է Շւէյցարիայում, ուր ոչ
հեռու անցեալում ապրում էինք և
մենք ինքներս: Շւէյցարական երիտա-
սարգութիւնը երկար ժամանակ, ինչ-
պէս և բոլոր միւս երկիրներում, զը-
նում էր հին պեռական սոցիալ-դեմո-
կրատիայի պապաշահների հանից: Եւ
որովհետեւ այդ պապաշահները օտից-
ցուրտ քաղրիներն էին, որովհետեւ նը-
բանք, իսկապէս սասած, ինչպէս զօւր
էլ գիտէք, բուրժուազիայի կողմն էին:

1663

ՄԵԼԻՔ

այդ իսկ պատճառով բունուր երիտա-
 սարգութիւնն էլ ոչնաեզ երկար ժա-
 մանակ չէր գործում յեզգափոխականօ-
 բէն: Վերջին 2—3 տարւայ ընթաց-
 բում Շւէյցարիտում ամեն ինչ փոխ-
 ւել է հիմնովին: Օգոստոս ամսին կա-
 յացել է շւէյցարական սոցիալիստական
 երիտասարգութեան համագումարը:
 Այս համագումարին ներկայ են եղել
 նաև հիւրեր գերմանական երիտասար-
 գութեան, գերմանական կոմմունիստ-
 սպարաակեաների կողմից: Եւ ահա
 այս համագումարի մէջ խնդիր էր
 գրւած, թէ ինչ է լինելու երիտասար-
 գութեան վերաբերմունքը գէպի III
 Ինտերնացիոնալը և գէպի բանւորնե-
 րի զինումը: Կառավարութիւնն արգե-
 լեց համագումարին քննել այդ խնդի-
 րը: Շւէյցարիան, ինչպէս գոյ գի-
 տէք, անւանում է դեմոկրատական
 հանրապետութիւն: Բայց և այնպէս,
 այնտեղ կան իրենց ժանդարմները,
 զգեմոկրատական ոստիկանները: Եւ
 երբ որ նրանց որևէ բան զիւր չի գա-
 լիս, նրանք ոյժ են գործադրում:

Համագումարից պահանջեցին, որ օ-
 րակարգից հանւի գէպի III Ինտերնա-
 ցիոնալն ու բանւորների զինումն ու-
 նենալիք վերաբերմունքի խնդիրը: Ե-
 րիտասարգութիւնը հրաժարեց այդ
 բանն անել և շարունակում էր նիստե-
 րը: Շւէյցարական օրէնքներով ոստի-

կանութիւնն իրաւունք չունի մտնելու
 նիստի դահլիճը ժողովի ժամանակ,
 Բայց որովհետև համագումարը հրա-
 ժարել էր կատարել իշխանութեան
 պահանջը, այդ պատճառով, երբ գոր-
 ծը հասաւ արգելած խնդրի քննու-
 թեան, ոստիկանութիւնը դահ-
 լիճ մտաւ: Համագումարը շարու-
 նակեց քննել այդ խնդիրը: Այն ժա-
 մանակ ոստիկանութիւնը փակեց նիս-
 տը: Դրանից յետոյ շվէյցարական երի-
 տասարգութիւնը նիստը տեղափոխեց
 քաղաքից դուրս լեռները: Շւէյցարիան
 լեռնոտ երկիր է, և երիտասարգու-
 թիւնն առանձնապէս սիրում է գրօս-
 նել լեռներում: Համագումարի նիստը
 տեղափոխեց լեռները: Ոստիկանու-
 թիւնն այդ բանի հոտն առաւ և ըսկը
 սեց կրնկակոխ հետապնել այդ համա-
 գումարը: Համագումարն աստիճանա-
 բար ելնում էր սարերը աւելի ու ա-
 ւելի բարձր: Ոստիկանութիւնն էլ նրա
 յետևեց: Համագումարը հասաւ գրեթէ
 մինչև ամբենաբարձր սառցապատ գա-
 գաթները, և այն ժամանակ միայն
 կարողացաւ միաձայն որոշում ընդու-
 նել, որ Շւէյցարիայի կոմմունիստա-
 կան երիտասարգութեան համագումարը
 գերմանական երիտասարգութեան
 պատւիրակների մասնակցութեամբ ո-
 րոշում է միանալ կոմմունիստական

III Բնտերնացիոնալին (ծափեր) և ա-
ջալցել բանւորների զինմանը:

Երբ շէկցարական ճղեմակրատա-
կանս ոստիկանութիւնը հասաւ լեռան
բարձունքը, երիտասարդութեան ներ-
կայացուցիչներէց մէկն ասաց.—Այժմ
կարելի է իջնել, որովհետեւ միևնոյն
է՝ որչափ ընդունւած է,—և յայտա-
բարեց այդ որոշումը:

Ընկերներ, սա սիմոն է: Եւ իրօք:
Երբ ամենազեմակրատիկ, բայց բուր-
ժուական հանրապետութիւններից մէ-
կի բանւոր երիտասարդութիւնը պէտք
է քննի զէպի II) Բնտերնացիոնալն ու
բանւորների զինումն ունենալիք վե-
րաբերման քի խնդիրը, որ ամեն մի
պրոլետարի համար ամենակարևոր,
ամենաթանկագին, ամենաներթական
խնդիրն է,—երիտասարդութիւնը հար-
կագրւած է լինում վախճել լեռները
բուրժուազիայի փողերով տողած ոս-
տիկաններից: Իսկապէս, բանւոր երի-
տասարդութիւնը կարծես թէ հետա-
նում է բուրժուազիայից, նրա սպա-
սաւորներից զէպի անհասանելի մի
բարձրութիւն: Նա որոշումներ է ըն-
դունում երկնքին մօտիկ, ուր նա շը-
չում է բուրժուական միազմեքից ա-
զատ մաքուր օդ: Այսպիսի պարագա-
տերում միաձայն և ցնձութեամբ ըն-
դունւած է կոմմունիստական Բնտե-
րնացիոնալի մէջ մտնելու որոշումը:

Եւ սա երծխոյական արարք չէր,
կատակ չէր. այս անցքով հետաքրքր-
ւեց շէկցարական ամբողջ մասուլը:
Ամբողջ բուրժուազիան վախեցած է,
որովհետեւ այժմ ոչ միայն երիտասար-
դութիւնը, այլ և բանւորական կու-
սակցութիւնն ամբողջովին միացաւ
նոյնպէս կոմմունիստական Բնտերնա-
ցիոնալին:

Ինչ երեկ էր, որ ևս կարգացի Լո-
զաննի լրագրի մէջ (Լոզոննը Փրան-
սիական Շէկցարիայի քաղաք է) մի
առաջնորդօղ յօդւած, որի մէջ բուր-
ժուական պրօզը սղբում է այն, ինչ
որ կատարում է Շէկցարիայում: Ա-
հա թէ, ասում է, ինչ օրի հասանք—
շէկցարական կուսակցութիւնն անցել
է կոմմունիստական Բնտերնացիոնալի
կողմը, կոմմունիստները սպառնում են
տերրօրի ենթարկել բուրժուազիան,
նրա բուրգը գզել: Եւ նա հանգստաց-
նում է բուրժուազիային ու ասում.
—չպէտք է զլուխը կորցնել, սառնա-
սրտութիւն պահպանեցէր, պէտք չէ
վախենալ, հանդիստ նայեցէք վտանդի
երեօին: Ամեն մի տողից յետոյ հան-
գստացնում է բուրժուազիային: Իսկ
ինքը, ինչպէս երևում է, վախից դո-
ղում դողդողում է:

Ահա թէ ինչպէս է բանը Շէկցա-
րիայի պէս մի երկրում:

Ես դիտւածք ընտրեցի այդ՝ բուր-

ժուազիայի համար, կարելի է ասել, որնուած անկիւնը: Այդ ամենահարուստ երկիրը, Շէէյցարիան, չէր պատերազմում: Նա չէզոք էր: Շէէյցարիայում գիւղացիները հարուստ են, այնտեղ բանւորներն այնքան էլ շատ չեն, սովը Շէէյցարիայում անհամեմատ քիչ է, քան ուրիշ որեէ տեղ: Եւ այնուամենայնիւ այդ երկիրը, որ մենք ապրում էինք 3 տարի. սրանից առաջ, չես ճանաչում, երբ այժմ կարգում ես նրա մասին լրագիրների մէջ: Երեք տարի սրանից առաջ այնտեղ չէին ուզում մեզ լսել: Երեք տարի սրանից առաջ Յիւրիխում ընկ. Լենիւնը, որ ապրում էր այնտեղ և բաւական ազատ ժամանակ ունէր, աշխատում էր կազմել շէէյցարական երիտասարդութեան առաջին խմբակները, և այդ աջողում էր անազին դժարութեամբ: Մեզ վրայ նայում էին իբրև ցնորամիտների վրայ, որ անբազում էին բաներ են քարոզում: Ահա թէ ինչպէս փոխեց աշխարհը երկու և կէս տարւայ ընթացքում: Կոմունիստական երիտասարդութիւնը բացարձակ պատերազմ է յայտարարում բուրժուազիային, բայց բուրժուազիան ոչինչ չի կարող անել ներքանց դէմ: Նա բանտերի մէջ է պահում երիտասարդութեան շատ պարագլուխ երի, դրանց թեում և ընկ.

Միւնցենբերգին և միւս երիտասարդ բարեկամ ու ընկեր Տրոստելին, շէէյցարական բանւոր երիտասարդութեան ներկայացուցչին: Շատ պրոլետարներ են նստած շէէյցարական բանտերում: Այնտեղ հարիւրաւոր դատեր են տեղի ունենում գործադուհների համար: Բայց և այնպէս բուրժուազիան ոչինչ չի կարող անել. կոմունիզմը նախաձեռներ է անում ամեն օր: Եւ Շէէյցարիայի ամբողջ բանւոր բնակչութիւնը, զոնէ նրա անազին մեծամասնութիւնը, արդէն կանգնած է կոմունիզմի նշանի տակ:

Միւրիշհազարդագրութիւն, որ մենք ստացանք, դա սկանդինաւեան երիտասարդութեան համագումարի մասին է: Սկանդինաւիայի մէջ մտնում են երեք պետութիւններ—Շւեդիա, Նորվեգիա և Իանիա: Պատերազմից առաջ էլ եղել են սկանդինաւեան բանւորական կոնգրեսներ: Օգոստոսին Իանիայում տեղի ունեցաւ շեղական, նորվեգիական և դանիական երիտասարդութեան սկանդինաւեան համագումար: Այնտեղ նոյնպէս հաւաքել էին հիւրեր, ուրիշ երկիրների ներկայացուցիչներ: Այս բանն այժմ առհասարակ բնորոշ է բոլոր բանւորական համագումարների համար: Երբ համագումար է տեղի ունենում մի երկրում, ներկայացուցիչներ են գալիս ու-

բիշ երկիրներէց: Ամենքը կարիք ունեն
 միջազգային կապ հաստատելու: Այս
 համազուտման եկաւ շեղական յայտ-
 նի կոմմունիստ ընկ. Մեդլուեդը, որը
 շեղական երիտասարդութեան զեկա-
 վարն է: Երեք երկիրներէ երիտասար-
 դութեան այս համազուտմարի մէջ ըըն-
 նըում էր դէպի կոմմունիստական
 Ինտերնացիոնալն ունենալիք վերա-
 բերմունքի խնդիրը: Մեզ հասցրել են
 այնտեղ արտասանած ճառերից մի
 քանիսը, որ մենք տպում ենք մեր
 «Кои унастичекни Иатериационал»
 օրգանի մէջ. Ահագին մեծամասնու-
 թիւնը վճռեց միանալ կոմմունիստա-
 կան Ինտերնացիոնալին: Յետոյ ստաց-
 ւած է Գերմանիոյի կոմմունիստական
 երիտասարդութեան կողմ, որ նոյնպէս
 տպում ենք և որը կրակոտ խօսքերով
 կոչ է անում բոլոր երկիրներէ բան-
 ւոր երիտասարդութեանը միանալ
 կոմմունիստական Ինտերնացիոնալին:
 Ստացւած է նոյնպէս մի կոչ այն մա-
 սին, որ Ամերիկայում ստեղծւած է
 կոմմունիստական Ինտերնացիոնալին
 միացած երիտասարդութեան միու-
 թիւն: Եւ մեզ ուղարկւած է այդ
 խմբի զեկավարներից մէկի—ընկ.
 Կրուզէի պատկերը, որը 20 տարւայ
 տաժանակրութեան է դատապարտւած
 ամերիկեան «գեմալրատական» քաղա-
 քակիրթ հանրապետութեան մէջ այն

բանի համար, որ բանւոր իրիտասար-
 դութեան մէջ քարոզում էր կոմմու-
 նիստական Ինտերնացիոնալի գաղա-
 փարները: Ամերիկայում այս բողոքին
 լիքն են շատ բաներ, այնտեղ կան
 ոչ պակաս քան 2 հազար հոգի քաղա-
 քականներ, զուցէ և աւելի: Եւ այս—
 մի երկրում, որ ամեն մի բուրժուա
 երդում է, թէ ինքը «գեմալրատական»
 կողմն է, ազատութեան կողմն է:

Հենց որ բանւորներն ուղեցին ոչ
 թէ խօսքով, այլ գործով կուել կոմ-
 մունիզմի համար, նրանց սկսեցին
 բանտերը նստեցնել հազարներով:

Երբ ստանում ես օտարերկրեայ
 լրագիրները, տեսնում ես, որ կոմմու-
 նիզմի խնդիրը գլխաւոր խնդիրն է
 դարձել բոլոր երկիրներում: Բուրժուա-
 կան բոլոր լրագիրների—աւտորիա-
 կան, գերմանական, ամերիկեան, ի-
 տալական, ֆրանսիական—բոլոր էջե-
 րը լիքն են կոմմունիզմի մասին
 պատմածքներով: Այն փոքրիկ կը-
 ատներէից, որ ես երկ կարգացի,
 պատկեր են ստանում, թէ ինչ է կա-
 տարում: Օրինակ վերցնում ես Պրա-
 գայի չեխական մի լրագիր և տես-
 նում ես հետեւալ հազարագրութիւնը:
 Այնտեղ հրատարակւում է մենշեիկ-
 եան մի օրգան, որ անանում է
 «Սոցիալ-Դեմոկրատ»: Այդ լրագրին
 զրոյս է անցած պատգամաւոր Մոզ-

բաշխել, որք հետ մենք կասկածելի
բազմ ունէինք անձամբ ծանօթ լինե-
լու: Եւ ահա չեթական այդ մենչեկի
Քողբաշեկի լրագիրը առանց որևէ ա-
ժօթ օւ խիղճ ունենալու ժառանութիւն
է գրում. «Հաղորդում ենք, որ այս ինչ
բանուր կոմմունիստի բնակարանում
շարաթը երկու անգամ տեղի են ու-
նենում բանուր կոմմունիստների ժո-
ղովներ»: Եւ լրագիրը օստիկանու-
թեան «ուշադրութիւնն է զօրձնում»
այն բանի վրայ, որ պէտք է միջոց
ներ ձեռք առնել: Այնուհետև մի քա-
նի օրից յետոյ, հաղորդում է ուրա-
խութեամբ, թէ «մեր յօդուածի վրայ
ուշադրութիւն դարձրին և միջոցները
ձեռք են առնւած»: Չեթօ Սլովակիան,
ինչպէս դուք գիտէք, նոյնպէս եղեմօ-
կրատական հանրագիտութիւն է: Եւ
ինչպիսի բարբերի պարզութիւն է
տիրում այնտեղ: Մենչեկին ուղղակի
ժառանութիւն է գրում լրագրի մէջ,
օստիկանութիւնն այդ ի նկատի է
առնում, ձերբակալութիւններ է կա-
տարում: Եւ այս անւանում է զաղա-
փարական կոխ:

Այո, կոխը չափազանց հեռու է
գնացել: Դուք կարդացիք, թէ վերջե-
րս ինչ է պատահել մեր ընկերնե-
րին Էստոնիայում, Եւ այսօր
մենք մի տխրաւոր թեղեկութիւն
ենք ստանում, թէ սահմանի վրայ

բռնւած 26 ընկերները գնդակահար-
ւած են մենչեկեան դահիճների, մեն-
չեկեան միմխարների կողմից, որոնք
2 րդ ինտերնացիոնալի կողմն են: Եւ
արդէն հաղորդեցի լրագրիներէ մէջ
թէ այն բանից յետոյ, երբ մենք անգ-
լիացիներին քշելուց յետոյ զբաւեցինք
Փնիպան, մենք ստացանք լուսանք-
կարչական մի պատկեր, թէ ինչպէս
արտաբուսա պատանի մի ուսու կօմ-
մունիստի դեղակահարում են այդ սե-
բնտերնացիոնալը ներկայացուցիչ-
ները: Դուք գիտէք, որ Օնիպայում
և Արխանգելսկում տիրում է Աւչրե-
զիկայի նման մի բան. այնտեղ գը-
լուխ է անցած աջ էօէր Չայկովսկին
և ամեն բան տեղի է ունենում անգ-
լիացիների օրհնութեամբ: Այդ լուսա-
նկարը ցոյց է առնու մի նու, նրա
ետեի մասը, նախ ձաղերից կապ-
ւած է երիտասարդ ուսու կօմմու-
նիստը, և նրա դէմ ուղղւած է երեք
հրացան. հրացան ուղղողներն են մի
ուսու օֆիցեր, մի Ֆրանտիացի օֆիցեր
և մի անգլիացի օֆիցեր—մի տեսակ
ինտերնացիոնալ: Այդ պատանի ըն-
կերոյ աչքերը կապած են, Եւ երբ
կանգնած են անգլիական մի քանի
օֆիցերներ և ժայտում են: Մենք գե-
տեղում ենք այդ լուսանկարը մեք
«Коммунистический Интернационал»
աճառարի մէջ: Եւ կո մեղաբանի, թէ

այս լուսանկարը ձօնում ենք երկբորդ ֆրանսերն աղիտնալի հերոսներին, որովհետև ամենայն արդարութեամբ այդպիսի մի լուսանկար պէտք է նըքանց նւիրել: Դրանով նրանք օրհնում են սպանութիւնը, զբանով նըքանք հովանաւորում են էստոնական մենչեիկներին, որոնք գնդակահարում են մեր 26 ընկերներին:

Ահա այսպիսի պատկեր է կատարում բոլոր երկրներում:

Նոյնը կատարում է Գերմանիայում, ուր բանտերը լեփ-լեցուն են: Մենք «Коммунистический Интернационал»-ի համարի մէջ ազում ենք ականատեսի փշաքաղով պատմութիւնը 32 նաւաստիների գնդակահարման մասին: Նոյնն է Հոնդարիայում, ուր այժմ ժամանակաւորապէս ապալւած է բոլշեիկեան իշխանութիւնը: Նոյնը Ֆրանսիայում: Ամեն տեղ կուրը բորբորում է, հասնում է եռման կէտին: Եւ ամեն տեղ բանւոր երիտասարդութիւնը կարելի է ասել սերախութեամբ հեռանում է անիծւած երկբորդ ինտերնացիոնալից, որը դարձել է մենչեիկների, մարդասպանների, բանկիրների, պոստիկ կանանց, զեղին մրտող-զրոզների և բուրժուազիայի ուրիշ վարձկանների ինտերնացիոնալ: Ամեն տեղ այժմ երիտասարդութիւնը փախչում է, ինչպէս ժամտախտից,

այդ անիծեալ կուսակցութիւններից, որոնք իրենց անւանում են սոցիալիստական, բայց գործով ծառայում են կապիտալիստներին:

Մենք սաացել ենք Ֆրանսիայում կամ մօնիստական III Ինտերնացիոնալին միացած կազմակերպութիւնների ցուցակը և այդ ցուցակի մէջ ամենադիտաւոր տեղերից մէկը պատկանում է երիտասարդութեան կազմակերպութիւններին: Սինայի Ֆիդելբուրցիան, այդ, մօտաւորապէս, նոյնն է Ֆրանսիայում, ինչ որ մեզ մօտ Պետրոզբուրում և նրա շրջակայքում: Սենան այն գետն է, որ անցնում է և Պարիզով: Եւ Սինայի Ֆիդելբուրցիան— զա Պարիզ քաղաքի և նրա շրջակայքի մի շրջանն է: Իսկ դիտաւոր կազմակերպութիւնն է Ֆրանսիայում: Եւ այդ ամբողջ կազմակերպութիւնը երկու տարի սրանից առաջ միացել է կոմմունիստական Ինտերնացիոնալին:


Այսպիսով, ընկերներ, պատկերք պօրզ է: Ամեն տեղ և ամեն կողմ դժգոհում է բանւորական մըջնանոցը: Ուր-ուրեք բուրժուական ոտնամանիքն աջորում է գալ և կապիտ կերպով արորել մըջնանոցը: Իսկ մըջիւնները չեն ոչնչանում, նրանք հաւաքուած են միատեղ, ու նորից անուծ է բանւորական մըջնանոցը: Իսկ ուր-ուրեք երիտասարդ բան-

ար մըջիւններն էլ շատ խիստ
կծում են պարսնայք ղեներայներին և
բուժուաներին, որոնք փորձում են
ոտի տակ տրարել մեր բանւորական
ճշմանոցը: Ահա թէ ինչու, ընկեր-
ներ, մենք կարող ենք հաւարձակ կեր-
պով ասել, որ Երիտասարդութեան ին-
տերնացիոնայն աճում է:

Ես կասեմ ձեզ զարձեալ,—այս աս-
այժմ գաղտնիք է, բայց ձեզ կարելի
է այս բանը յայտնել,—որ մօտիկ օ-
րերս պիտի կայանար և այս բուպէին
գօցէ կայացել է մի համազումար,—
բոլոր երկիրների երիտասարդութեան
միջազգային համագումարը: Այդ հա-
մագումարը սկզբում նշանակւած էր
Ստոկհոլմում, յետոյ ուղում էին գու-
մարել Ռուսաստանում կամ Հունգա-
րիայում, երբ այնտեղ Խւրճրգային
իշխանութիւն էր: Բայց այս ճրագիր-
ները չաջողեցին: Ստոկհոլմում տի-
րում են բուրժուազիան և մեջերկնե-
րը, մենչեիկ Բրանսինգի գլխաւորու-
թեամբ, և նրանք պատրաստ են կոմ-
մունիստական երիտասարդութիւնը
բանտ նստեցնել կամ գնդակահա-
րել, բայց երբէք նրանք պատստան
չեն տայ համագումարի համար: Մեզ
մօտ գալը գժար է. ամեն անց պա-
շարտական պրօլիւն է: Հունգարական
խորհրդային իշխանութիւնը տապալ-
ւած է ներկայումս: Եւ մենք փորձ ա-

3931

րինք. երիտասարդութեան համագու-
մարը գումարել կըողական մի ուրիշ
մայրաքաղաքում, որ մենչեիկներէ իշ-
խանութիւնն այնքան թուլացած է, որ
համագումարը թերևս այնտեղ կաջող-
ւի: Համագումարը նշանակւած էր վեր-
ջերս. այնտեղ են մեկնել Ռուսաստա-
նի բանւոր երիտասարդութեան ներ-
կայացուցիչները: Եւ մենք օրէ ցօր
տեղեկութիւն ենք սպասում, որ երի-
տասարդութեան միջազգային համա-
գումարը կայացել է: Եւ եթէ արդելք
չեն եղել սասիկանական խոչընգոտնե-
րը, այդ համագումարն անշուշտ կա-
յացել է: Եւ կասկած չկայ,—մենք այս
ասում ենք զանազան երկիրներից ստա-
ցած տեղեկութիւնների հիման վրայ,
—որ եթէ համագումարը կայացել է,
ապա բոլոր երկիրների բանւոր երի-
տասարդութեան բոլոր ներկայացու-
ցիչների միահամուռ ազդակը բոլոր
լեզուներով եզել է՝ կեցցէ՛ Երբօրդ
ինտերնացիոնալը (ծափեր): Կարելի է
կասկածել այն բանում, թէ կոպմա-
կերպութեան տեսակէտից աջուկն է
արդեօք լուծել այդ խնդիրը, բայց չի
կարելի կասկածել այն բանում, որ
սոցիալիստական պրօլետարական կրի-
տասարդութեան անկախ բոլոր եր-
կիրներում, որ պրօլետարիւն ունեն այդ
կազմակերպութիւնները, ազատել են
էջն սոցիալ գիւժիկաբարական կուսակ-



ցոթիւններք նեխոց ազգեցութիւնից,
—այն կուսակցութիւններք, որոնք
սպանեցին կրօններախն և Լիւթսեմ-
բուրդին: Եւ բանւոր երիտասարդու-
թիւնն աճաղջ աշխարհում կանգնած
է Երրորդ Գոմմուեթիտական Ինտեր-
նացիոնալի դրօշակի տակ:

Մօտիկ շարաթնեքս պէտք է կայա-
նայ երիտասարդութեան համառուսա-
կան համագումարը Մոսկուայում կամ
Պետրոգրադում, հուանական է, որ
Մոսկուայում, և այդ համագումարն
անպայման նոր շրջան կը կազմի ձեր
կազմակերպութեան զարգացման պատ-
մութեան մէջ: Այդ համագումարի մէջ
կը քննեն հերթական դարձած մի շարք
խնդիրներ: Եւ այդ համագումարը կօզ-
նի ձեզ սեղմել ձեր շարքերը: Ոչոք մեզ-
նում երիտասարդութեան մէջ կատար-
ող աշխատանքի վրայ չի նայում իբ-
րև ժամանցի, իբրև անմեզ կատակի,
իբրև գւարձութեան վրայ: Իսկ անհե-
թեթութիւն է: Հարկ չկայ նայելու
վերևից ներքև: Պէտք չէ կարծել թէ
հասուն մարդիկն են միայն, որ իդ-
կական սոցիալիստներ են, իսկ պա-
տանեկութիւնը—իբրթէ զրանք ջանել
ջուլներ են, նրանց չի կարելի լուրջ
նշանակութիւն տալ և այլն: Ընդհա-
կուտակը, երիտասարդութեան շարժու-
մը—գտ շատ լուրջ գործ է: Մենք միշտ

գիտէինք, որ բանւոր երիտասարդու-
թիւնը—գա մի «մեծ պետութիւն» է,
շատ բան կախում է նրա համակրան-
քից և հակակրանքից: Ում որ համա-
կրում է երիտասարդութիւնը, ամբողջ
ազգական էլ նրանն է: Երբ մի քանի
ամիս առաջ ձախ Լուկսերին աջուկեց
ազսամարութիւն յարուցել և երբ ե-
րիտասարդութեան մի մասը կարծես
թէ նրանց կողմն էր, ես ասացի, ոչինչ
աւելի վասնզաւոր չէ, քան այս: Իսկ
երբ երէկ ինձ աջուկեց կարգալ «Ան-
կուսակցականութիւնը և կոմմունիզ-
մը» զասախօսութիւնը նեակայա զաս-
ուայից այն կողմը և երբ մի քանի
թաղեր այն կողմը ինձ դիմաւորեցին
պատանեկութիւնն ու բանւորների
մանկտիք բարեկամական զգացում-
ների արտայայտութիւններով, ես աս-
ացի՝ սա ամենալաւ նշանն է: Սա
ապացոյց է, որ բանւոր զասակարգը
մեր կողմն է:

Ահա թէ ինչու, ընկերներ, դուք
կարող էք բանւոր երիտասարդութեան
բոլոր խնդիրներին մեր ցոյց տալ
վերաբերմունքից համոզել, որ մենք
չենք նայում այս գործի վրայ, իբրև
կատակի վրայ, այլ նայում ենք իբրև
մի շատ լուրջ գործի վրայ:

Ատանձնապէս կարեւոր է այս գործը
տուաջ տանել գիւղում: Ես չգիտեմ,
զժբազգարար, թէ այս զանկիւնում շնա

կան արդեօք Պետրոսըրազի նահանգի գիւղի ներկայացուցիչներ, բայց գիտեմ անտեսել կերպով, որ թէ Պետրոսըրազի նահանգում և թէ ամբողջ Ռուսաստանում գիւղում չափազանց ինչ բան է արւած կազմակերպելու համար կոմմունիստական երիտասարդութիւնը և գիւղական երիտասարդութիւնն ընդհանրապէս: Ի հարկէ, շատ դժւարութիւններ կան մեր ճանապարհին: Յետաժողովրդացիներն այս բանը համարում են իբրև զարհուրելի, իբրև ոչ-լուրջ գործ. նրանք ասում են, թէ «ձուները հուներին չեն սովորեցնում», թէ ջահէլները չպէտք է խառնուեն լուրջ մտորկանց գործերին: Եւ ստիպւած ես յողթահարել մի շարք նախապաշարուներ: Բայց այս գժաւորութիւնները ինչ ուզում է լինի՝ պէճ է յաղթահարել: Պրտերի, Մոսկւււայի, մայրաքաղաքի և տոնասարակ քաղաքի երիտասարդութիւնը պէտք է, իմ կարծիքով, աւելի քիչ մտածի այստեղ գրադարաններ ու միութիւններ կազմելու մասին (թէև, իհարկէ, այդ այստեղ էլ անհրաժեշտ է). նա պէճ է մտածի այն մասին, որ այդ բանը տանի գիւղը: Այս է գլխաւոր խնդիրը:

Պաղարում բանուր դասակարգչուրս է պրծնել նախապաշարուներէ շրթաներից, նա կանգնած է մեր կողմ:

սակցութեան կողմը: Իսկ գիւղում տեսողին խաւար է արբում: Եւ ինձ թւում է, թէ դիտութեան այն շնչիւ պաշարները, որ ունի քաղաքի բանուր երիտասարդութիւնը, պէտք է անյապաղ տանել գիւղը: Այնտեղ այդ բանը կը տանապատկելի և զուք յետ կըստանաք ձեր ծախսերը ահադին տակաւներով:

Գիւղացիական երիտասարդութեան մէջ զուք համակրութիւն կը գտնէք: Սկզբում, անկասկած, դժւար կը լինի: Բայց այնտեղ ամեն մի հատիկ հասկեր կը տայ: Բանուր երիտասարդութեան համասուտական համագումարի մէջ գիւղում կատարելիք աշխատանքի խնդիրը պէտք է դնել առաջին հերթի: Մեր երկիրը գիւղական է, գերակշռող բնակչութիւնը գիւղի մարդիկ են: Եւ մինչև որ մենք համաձայնութեան չգանք նրանց հետ, մինչև որ ամեն մի վոլոստում, ամեն մի խոշոր գիւղում չունենանք գէթ 2-3 երիտասարդացի քաղկացած մի փոքրիկ խմբակ, մինչև որ մենք չհասցնենք այնտեղ լրագիրներ, գրքոյկներ, բրոշուրներ, մինչև այդ ժամանակ՝ կարելի է ասել, որ մենք ոչինչ չենք արել:

Իսկ այս հեշտ բան չէ: Երբեմն չընչին բան է թւում 3 լրագիր գիւղ հասցնելը: Մինչդեռ գա տակի

կարևոր գործ է, քան 10001 անգամ լաւ խօսքեր կրկնելն ու սոսկ բանաձեւեր հանելը: Բանց թէ սեփական իւզի մէջ տալապէք, աւելի կարևոր գործ կատարած կը լինէք, կ'իթէ ուսուցանէք զէթ երկու գիւղական պատանի, առք նրանց լրագիրներ, առք ձեր քաղաքային հասցէն, ձեր ակումբի, բնկերութեան հասցէն, կապ հաստատէք գիւղի հետ, աշխատէք, որ նրանք քաղաք գան, լսեն և սոցա գնան պատմեն իրենց գիւղում, թէ ինչ ընկերութիւն, ինչ միութիւն է այդ, և նոր սերմ գցեն: Ահա մի գործ, որ կարող է և պէտք է անի ձեզնից ամեն մէկը:

Եւ ամենից առաջ, ընկերներ, պէտք է սովորել, սովորել եւ դարձեալ սովորել: Ի հարկէ, ծիծաղելի կը լինէր, որ ես մի ձանձրալի բարոյախօսութիւն անեմ ձեզ այն մասին, թէ ուսումը բոյս է, իսկ սոցիալութիւնը՝ խաւար: Սա այրուբենական մի ճշմարտութիւն է, հազար անգամ ծեծւած, և ամեն մէկը գիտէ այդ: Այդ շատ անդամներ են ձեզ ասել ձեր պաշտօնական ուսուցիչները, թէ՛ սովորիր ու սովորիր: Մենք նոյնպէս ասում ենք, բայց ոչ նոյնը: Մենք կանչում ենք ձեզ ոչ թէ պաշտօնական սերտագութեան, այլ կենդանի գիտութեան: Մենք ոչ մի զէպրում չենք կարող ասել, թէ կամ-

մունիսար կարող է եռայ գնալ ասանց գիտութեան: Ոչ, Երբեմն պատահում է, որ երիտասարդութիւնը այլևս չի օւղում սովորել, կարծեա թէ վրէժ աննելու համար հին ազգային պաշտօնական վարժապետից, որը ամենքին ձանձրացրել էր, որից մեռնելութեան հոտ էր փշում գիտութեան փոխարէն: Այդպիսիներն օտում են հայրիկս ու մայրիկս էն զլիսից զահչէս տարան ուսման, գիտութեան մասին և ահա այժմ, երբ ես ազատութիւն եմ ձեռք բերել, երբ ես արծաթիկի նման եմ գառել, թքել եմ ուսման վրայ, հարկաւոր չէ ինձ ուսումը:

Խնդիրն այսպէս դնել, մեր կարծիքով, չի կարելի:

Ի հարկէ, հին ուսուցումը, սերտագութիւնը, մեռելութիւնը, անգիր անելը — այդ բոլոր պէտք զէն շարտել: Բայց կենդանի գիտելիքները մեզ հարկաւոր են օդի պէս: Եւ մենք ունենք մեր սեփական գիտութիւնը, պրոլետարական ահագին գիտութիւն. մենք ունենք հարիւրաւոր և հազարաւոր զրքեր՝ զբւած կոմմունիզմի լաւագոյն մտածողների կօզմից, սկսած Մարքսից մինչև ներկայ գործիչները: Մեր երիտասարդութիւնը չղէտք է աչքի ընկնի միայն նրանով, որ նա ամենաազնիւր, ամենամաքուրը կը լինի և կը նետուի ամենապակասութեամբ:

կարևոր գործ է, քան 10001 անգամ
լաւ խօսքեր կրկնելն ու սոսկ բանա-
ձևեր հանելը: Բանց թէ սեփական իւզի
մէջ տապալուէք, աւելի կարևոր գործ
կատարած կը լինէք, կթէ ուսուցա-
նէք գէթ երկու զիւղական պատանի,
տաք նրանց լրագիրներ, տաք ձեր
քաղաքային հասցէն, ձեր ահուճրի,
ընկերութեան հասցէն, կապ հաստատէք
զիւզի հետ, աշխատէք, որ նրանք քա-
ղաք դան, լսեն և աղազ գնան պատ-
մեն իրենց գիւղում, թէ ինչ ընկե-
րութիւն, ինչ միութիւն է այդ, և
նոր սերմ գցեն: Ահա մի գործ, որ
կարող է և պէտք է անի ձեզնից ա-
մեն մէկը:

Եւ ամենից առաջ, ընկերներ, պէտք
է սովորել, սովորել եւ դարձեալ սովո-
րել: Ի հարկէ, ծիծաղելի կըլինէր, որ
ես մի ձանձրալի բարոյախօսութիւն
անեմ ձեզ այն մասին, թէ ուսումը
լոյս է, խի սգիտութիւնը՝ խաւար:
Սա այրութեան համար մի ճշմարտութիւն
է, հազար անգամ ծեծուած, և ամեն
մէկը գիտէ այդ: Այդ շատ անդամներ
են ձեզ ասել ձեր պաշտօնական ու-
սուցիչները, թէ՛ սովորիր ու սովորիր:
Մենք նոյնպէս ասում ենք, բայց ոչ
նոյնը: Մենք կանչում ենք ձեզ ոչ թէ
պաշտօնական սերտութեան, այլ
կենդանի գիտութեան: Մենք ոչ մի
գէպում չենք կարող ասել, թէ կամ-

մունիսաք կարող է եղայ գնալ ոտանց
գիտութեան: Ոչ, Երբեմն պատահում
է, որ երիտասարդութիւնը աչիս չի
ուղում սովորել, կարծես թէ վրէժ
առնելու համար հին ազդեակալի պաշ-
տօնական վարժապետից, որը ամեն-
քին ձանձրացրել էր, որից մեռելու-
թեան հոտ էր փչում գիտութեան փո-
խարէն: Այդպիսիներն ասում են հայ-
րիկս ու մայրիկս էն գլխից գանչէս
տարան ուսման, գիտութեան մասին
և ահա այժմ, երբ ես ազատութիւն եմ
ձեռք բերել, երբ ես արծախիկ նման
եմ դասել, թքել եմ ուսման վրայ,
հարկաւոր չէ ինձ ուսումը:

Խնդիրն այնպէս դնել, մեր կարծի-
քով, չի կարելի:

Ի հարկէ, հին ուսուցումը, սերտո-
ղութիւնը, մեռելութիւնը, անգիր
անելը — այդ բոլոր պէտք գէն
չպրտել: Բայց կենդանի գիտելիքները
մեզ հարկաւոր են օդի պէս: Եւ մենք
ունենք մեր սեփական գիտութիւնը,
պրօլետարական անագին գիտութիւն-
մենք ունենք հարիւրաւոր և հազարա-
ւոր գրքեր՝ զբաւած կամ մտնիզմի լաւա-
դոյն մտածողների կողմից, սկսած
Մարքսից մինչև ներկայ գործիչները:
Մեր երիտասարդութիւնը չպէտք է
աչքի ընկնի միայն նրանով, որ նա
ամենաազնիւն, ամենաանձնէրը կը
լինի և կը նետի ամենախանգուտ

եղր: Մեր երիտասարդութիւնը նախկին սերնդից պիտի զանազանւի նըրանով, որ նա աշխատասէր կը լինի, կը սովորի, չի երեւի քամուց, այլ կաշխատի ամուր հիմք ունենալ, ուսումնասիրել, թէ ինչ բան է կոմմունիզմը, հասկանալ մեր ծրագրի ամեն մի տողը, մտնել խնդիրներից ամեն մէկի խորքը, մտածել այն մասին, թէ ինչ է կատարուում այս բողեկն Ռուսաստանում:

Իսկ այն, ինչ որ կատարուում է, դա մի հսկայական համալսարան է բանւորական և գիւղացիական երիտասարդութեան համար: Մեր ամեն մի դիկրեա առիթ է տալիս մտածելու և ուսանելու, թէ ինչու նա զբւած է այդպէս և ոչ թէ ուրիշ կերպ: Պէտք է ուսումնասիրել ամեն մի դիկրեա: Յետոյ, մենք ունենք մի պատկանելի գրականութիւն. մենք թարգմանել ենք այն բոլոր լաւը, ինչ որ եղել է բոլոր լեզուներով, ինչ որ զբւած է շատ տասնեակ տարիներ առաջ: Մեր սեփական կուսակցութեան շարքերում մենք ունենք նշանաւոր տեսաբաններ ու գրողներ, որոնց զբւած ամեն մի տողը բանւորներն ու գիւղացիները թարգմանում են աշխարհիս բոլոր լեզուներով: Պէտք է, որ այդպիսի ամեն մի գլուխը լինի ամեն մի բանւորական ա-

կմբանոցում, ամեն մի փոքրիկ քաղաքում: Պէտք է կազմել այդ գլուխը յոյճները, բրոշիւրները, ծրագիրն ուսումնասիրող խմբակներ 5-10-15 հոգուց: Կրկնում եմ, պէտք է սովորել, ու սովորել կոմմունիզմը:

Եւ զուգ, ընկերներ, տեսնում եք ի հարկ է, որ այժմ Խորհրդային իշխանութիւնը և կոմմունիստական կուսակցութիւնը այս բանում ընդառաջում են ձեզ, անում են ամեն բան, ինչ որ հնարաւոր է, որպէսզի օգնեն ձեզ սովորելու: Եւ դեռ երբէք «ոչ-ժը գիտութեան մէջ է» խօսքերը չեն հնչել այնքան համոզեցուցիչ, այնքան ծանրակշիռ կերպով, որքան այս բողեկն:

Մեա այն խորհուրդներն, ընկերներ, որ ես կարող էի ապա այս բողեկն ձեր համագումարին:

Կազմակերպեցէք կոմմունիզմի ուսումնասիրութեան աշխատանքը: Բանն այն չէ, որ զուգ կարգայիք Կարլ Մարքսի «Կապիտալ»-ը: Ձեզնից շատերի ուժերից վեր բան է մի անգամից հաստ զբքի կարգալը: Կան բաւականաչափ ուրիշ գրքեր, ձեռնարկներ, բրոշիւրներ, որ զուգ պէտք է անդիք գիտենաք, որպէսզի կարողանաք մտնել մեզ հետ, հաշտն կոմմունիստներին հետ: Ձեր միտքը թրթրուուն է, զուգ շտեկ եք, զուգ պէտք

է կրթւէջ հիմնովին: Դուք պէտք է
 յարուցէք ձեր մէջ գիտութեան ծա-
 րար, դուք պէտք է խմէք գիտու-
 թեան աղունքից, ինչպէս յօգնած ճամ-
 քորզը խմում է ծի կոծ երկու օր
 ծարու մալուց յետոյ: Դուք պէտք է
 վրայ ընկնէք գիտութեան ազբիւրին
 և խմէք նրան ազահաբար և տաք, որ
 ուրիշներն էլ խօսն: Եւ չպէտք է
 նստէք միայն մեր փռտագանձ,
 մեր ամենից սիրած Պետրօզարզում,
 այլ ամեն մի բան, ինչ որ կարելի է,
 վերցնել այտեղից և տանել գիւղը,
 որը կարիք ունի գրքօյի, լրագրի,
 բանդէա, հասկացոց և զբաղէա մար-
 դու: Պէտք է զնալ այնտեղ, որովհե-
 տև մեր գիւղը յիսամայ է, խաւար:
 Իսկ վերջին հաշուով մեր յեզափօխու-
 թեան ամբողջ վիճակը կախած է
 գիւղից:

Ձեր խնդիրը կայանում է նրանում,
 որ այժմ նախապատրասուէք անա-
 ջիկայ համառուական համազումարի
 համար, որ այս բոլոր խնդիրները
 պիտի քննեն: Անցեալները երիտա-
 սարգութեան Համասուտական Միու-
 թիւնը հաղորդադրութիւն տւեց ինձ
 բանուր երիտասարգութեան կազմա-
 կերպութիւնների թւի մասին: Պէտք
 է ստեմ, որ ես ապշած մնացի ես
 չգիրտէի, թէ երիտասարգութեան կազ-
 մակերպութիւններն այնքան աճել են,

որ մենք ունենք հազարաւոր մանր
 բճիճներ: Մի քանի նահանգներում
 կան երիտասարգութեան 300 ական
 կազմակերպութիւններ, ճիշտ է, թոյլ
 մանուկ, հենց նոր ասն էլած, բայց
 մեծ ապագայ ունեցող: Մենք բուա-
 կան առաջ ենք անցել: Մենք ունենք
 ամբողջ Ռուսաստանում բանուր և
 զիւղացի երիտասարգութեան մօտ
 80.000 անգամ: Բայց և այնպէս, զա
 մի կաթիլ է ծովի մէջ. զա մի փոք-
 րիկ սկիզբ է: Մեզ հարկաւոր են ոչ
 թէ 100, ոչ թէ 200 հազար, այլ երկու
 միլիոն անգամներ, որպէսզի ամբողջ
 երիտասարգութիւնը կազմակերպւած
 լինի, որպէսզի 20 տարեկանների մի-
 ջոցով մենք ազդեցութիւն ունենանք
 պատանիների, 15 տարեկանների վը-
 րայ, իսկ 15 տարեկանների միջոցով
 ազդեցութիւն ունենանք աւելի փոք-
 րիւրի վրայ:

Յիշեցէք, թէ ինչպէս էր վարում
 բուրժուազիան: Ինչի վրայ է յենւած
 բուրժուական իրաւակարգը: Միայն
 բռնութեան վրայ չէ, որ նա յենւում
 է: Ա.ինը, բանաբը, աքսորը, վնդա-
 ցիրը, թնդանոթը, այս բոլորը մի
 խոշոր ոյժ է բուրժուազիայի ձեռքին:
 Բայց բուրժուազիան յենւում է այլև
 այն բանի վրայ, որ զպրոցն ու
 զատերարակութիւնը նա իր ձեռքն է
 տակ: Օրինակ, որեւէ ֆրանսիական

բուրժուական, դեմոկրատական հանրապետութեան մէջ երեխան երեք տարեկան հասակից, հէնց որ խօսել և սովորում, սկսում է բուրժուական-շոքիեիտական երգեր երգել: Առաջին խրիստոմատիան, որ ստանում է նա, ծայրից ծայր բուրժուական խրիստոմատիա է, տէրտէրական, աէակցիոն խրիստոմատիա: Իսկ երբ նա գպրոց է ընկնում, բուրժուական փորձւած ուսուցիչների ձեռքը, նրանք թունաւորում են նրա հոգին գիտեմատիքաբար, Եւ քսան տարեկան հասակում ստացւում է բուրժուական «քաղաքացու», մարդ-մեքենայի մի ամբողջացած ախպ, որին կարելի է շարտել սր կուրի գաշան ուզեա, և նա անասունի պէս կոչնչացնի նոյնպիսի բանւորների, ինչպիսին ինքն է, որն իր ամբողջ կեանքում պար կը դայ բուրժուազիայի մտքակի տակ: Սա բուրժուազիայի մի խորամանկ մեխանիկա է: Այս բանի վրայ խորհել են բուրժուազիայի լաւագոյն ուղեղները,—թէ ինչպէս պէտք է խեղդել երեխաներին և պատանեկութիւնը գպրոցների, տէրտէրների և ուրիշ նըման բաների միջոցով:

Այժմ պատմութեան մէջ այս առաջին անգամն է, որ մենք հնարաւորութիւն ենք ստացել մեր ձեռքն առնելու այս գործը և այդ բոլորն

անելու մեր հոսկացածի պէս: Մենք այժմ հնարաւորութիւն ենք ստացել մանկան հոգին շտալու այն եղաւիաների, աէակցիոններների ձեռքը, որոնք խեղում են այդ հոգին: Մենք հնարաւորութիւն ենք ստացել կազմելու մեր խրիստոմատիան. մենք զբոյրոցները մեր ձեռքն ենք առել: Մենք ունենք սչ-կոմմունիստ շատ ուսուցիչներ, կոմմունիստական իշխանութեան շատ թշնամիներ, բայց կայ նրանց մէջ մի մասը, որ մեր կողմն է Մենք այժմ, գպրոցները մեր ձեռքն աննելով, հնարաւորութիւն ունինք ուսուցանելու պատանեկութեանը մերովի, այնպէս, ինչպէս այդ հարկաւոր է բանւորին և գիւղացուն:

Իուք, բանւոր և գիւղացի երիտասարդութեան ներկայացուցիչներդ, չպէտք է ցրւէք, չպէտք է կպչէք ա մեն տեսակ գործի. չպէտք է յաղթահարէք դժւարութիւնները միայն խանդավառութեամբ ու սգնորութեամբ: Իուք պէտք է պատանեկական հասակից սովորէք դառնալ կազմակերպիչներ և շինարարներ: Պէտք է կարողանալ ոչ միայն պրոպագանդիստագիտատոր դառնալ, ոչ զմիայն կարողանալ ճառ արտասանել և գիրք ճարել, այլ և պէտք է լինել կազմակերպող: Ահա մեր օրերի գլխաւոր արւեստը:

Վերջերս գերմանական կոմմունիստները կորցրին կազմակերպողներից լաւագոյնին— ընկ. Տիշկային, որը նրանց կուսակցութեան երկաթեայ ձեռքն էր: Եւ գերմանական կոմմունիստները սուր ցաւ զգացին այդ կորստից:

Այժմ Ռուսաստանում ամենից աւելի անհրաժեշտ են շինարարներ, կազմակերպողներ: Պէտք է երիտասարդութեան մէջ յարուցել կազմակերպող դասնալու ձգտումը: Պէտք է, որ ամեն մի պատանու ցնորքն այս լինի.— ես կը մեծանամ, կը դառնամ խոշոր կազմակերպող մեր վոլստի մէջ, մեր գաւառում, նահանգում, իսկ յետոյ—գուցէ և ամբողջ Ռուսաստանում և, ով գիտէ, դուցէ և միջազգային մասշտաբով, ինչպէս ընկ. Խեզլունդն էր, որ սկզբում շեդական երիտասարդութեան զեկավարն էր, իսկ այժմ Երրորդ Կոմմունիստական Ինտերնացիոնալի պարագլուխներից մէկն է: Պէտք է, որ պատանիները ըսկան փոքրիկ գործից, բայց այդ փոքրիկ գործը կատարեն սիրով: Կարևորն առաջին ծիլն է. կարևոր է, որ սկզբում ստեղծւի մի փոքրիկ կազմակերպչական ընթացք. Անաթէ, ընկերներ, ինչ կարող եմ մաղթել ձեզ: Աւելի շատ կորով, աւելի շատ յամառութիւն,

կէս-նպատակի ձգտումն, կազմակերպչութիւն:

Պատրաստեցէք ձեր համապատասխան համագումարի համար, որին օլիտի նաչի ամբողջ աշխարհի բանւոր երիտասարդութիւնը, որովհետև բանւոր երիտասարդութիւնը Ռուսաստանում այս բողէին հանդիսանում է, անկասկած, ամենաազգայնիկ կազմակերպութիւններից մէկը Կոմմունիստական Ինտերնացիոնալի մէջ:

Նախապարաստեցէք այդ համագումարը, որ նա լինի ոչ միայն իբրև մի գորահանգէս, այլ և ապա մեզ նոր կազմակերպութիւններ, խմբակներ գիւլում, քաղաքներում, նոր գրադարաններ, ակումբեր, նոր ազգայ զինւորներ կարմիր բանակի համար, ապագայ լաւ կազմակերպողներ բանւորներից և գիւղացիներից:

Մեր առջև աշխատանքի մի անծայր ծով է տարածւում: Մենք նոր ենք սկսում, մենք զեռես սե աշխատանք ենք կատարում: Բայց մօտ է ժամանակը, երբ մենք ամբողջ աշխարհում կկառուցենք ազատօրէն, և այն ժամանակ աւելի լաւ ճանապարհ կը բացւի ժողովրդից, զիւղացիներից և բանւորներից դուրս եկած կառուցողների համար:

Եւ այդ նոր կեանքը դուք կուլած էք կառուցելու: Ձեզ, երիտասարդու-

Թեանդ է պատկանում ապագան:
 Դուք կը լինէք մեր հուսակցութեան
 կորիզը մի քանի տարուց յետոյ: Դուք
 պիտի տաք մարտիկների մի սերունդ,
 ոչինչ կախած կը լինի մեր ամբողջ
 կուրի ելքը:

Աջողութիւն եւ մաղթում ձեր աշ-
 խատանքին: Եւ ես հաւատացած եմ,
 որ ձեզնից ամեն մէկը կը կատարի
 իր պարտքը և կօգուտի իր բաղաւոր
 հնարաւորութիւնից, որպէսզի գէթ մի
 վերջուէ գէթ մի աղիւսով ուժեղացնի
 և բարձրացնի մեր շէնքը—նոր կոմ-
 մունիստական Ռուսաստանի կառու-
 ցումը:

P. B. II. 1000

3 KIM

9 60

2013

« Ազգային գրադարան



NL0036710

37 96

